

ծածկուում են հաբար բանականութիւնից, որովհետեւ սա քո մէջ որոնում է միայն իւր հետաքրքրութեան համար կերակուր, դու նորա համար մնում են անթափանցելի գաղտնիք: Խակ նոցա, այք կամենում են լսել քո ձայնդ, որան հետեւելու համար, նոցա, այք քեզ կոչում են հնազանդելու համար, դու յայտնում ես, և այդպիսեայ համար դառնում ես աւելի և աւելի մեծ, գեղեցիկ, երկրպագութեան արժանի և քո պահանջած բոլոր զոհերն ոչինչ են դառնում այն մաքուր, խորին ու անսահման երջանկութեան առաջ, որով լցնում ես դու սրտերը:

(Բերտիէ):

Պ. Ս.

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԻՐ Ա Ի ՈՒ Ն Ք Ի Խ Ա Խ Տ ՈՒ Մ Ն Ե Ի Պ Ա Տ Ի Ժ 1).

Մ Ա Հ ՈՒ Ա Ն Պ Ա Տ Ի Ժ.

Հասարակական բարոյականութեան համար էական նշանակութիւն ունի իրանց պաշտպանութիւնը կամ արդարութեան պահպանումն պետութեան կողմից: Խրաւանց կարգը Հասարակութեան բարոյական կեանքի հիմն է, նոյնպէս և նորա արտաքին գիմարկտութեան ոյժն, ուր այս հիմքը խախտուած է, զորօրինակ ուր ազգը կորցրել է իւր վստահութիւնն գէպի գաւառական հաստատութիւնը, այդ նշան է Հասարակական բարոյականութեան թուլանալուն (ժողովրդի բարոյական գիտակցութեան թուլանալը): Որովհետեւ իրաւանց պահպանութիւնը նշանակութիւն ունի ոչ միայն առանձին անձնաւորութեան համար, այլ և բոլոր քաղաքական հասարակութեան համար: Այս հիման վերայ իրաց կարգն անպայման կերպով պէտք է պահպանուի ու պաշտպանուի ամեն տեսակ կամայականութեան և ինքնիշխանութեան դէմ: Պատժական իրաւանց պահպանութեան մէջ երեւում է, թէ պետութիւնն որքան լրջութեամբ վերաբերուում է գէպի իրաւունքն ու արդարութիւնը: Քրէական պատժական օրէնստուութիւնը մի ազգի մէջ, նորա ընդունելութիւնն և յարգանքը գէպի նա, ազաջոյց և արտայայտիչ է ազգի իրաւաբանական գիտակցութեան, ընդ նմին և նորա բարոյական գիտակցութեան օրէնքի հեղինակութեան, պարտաւորութեան

1) Տես «Արարատ» 1891 թ. հոկտեմբեր 531 եր.

ու պատասխանատուութեան, մեղադրութեան և յանցաւորութեան վերաբերմամբ:

Պատժական իրաւունքը պետութեան մէջ հիմնուած է ոչ թէ մարդկային համաձայնութեան և սուբորութեանց վերայ, այլ նորա վերայ է հիմնուած, որ Աստուծոյ կամքով նա կոչուած է երկրիս վերայ արդարութիւն հաստատելու արտաքին իրաւաբանական հաստատութեանց մէջ և արտաքին միջոցներով: Պօղոս առաքեալն ասում է. «իշխանն Աստուծոյ պաշտօնեայ է՝ քեզ ի բարիս. ապա եթէ չար գործիցես, երկիրս զի ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ, Աստուծոյ սպասաւոր է՝ վրէժինդիր ի բարկութեան այնմ որ դչարն գործիցէ» (Հռոմ. ԺԳ. 4): Պատժի Գաւաթը չէ կարելի իւր ամբողջ էութեամբ ըմբռնել, եթէ նրան գտնել կը ջանան միայն յանցաւորին ուղղելու կամ ուրիշներին վախեցնելու մէջ և կամ պետութեան ինքնապաշտպանութեան անհրաժեշտութեան մէջ յանցաւորի դէմ: Եթէ պատժի նպատակը միայն ուղղելը լինէր, պատիժը կարող էր բոլորովին ջնջուիլ վերանալ այն դէպքերում, երբ յանցաւորը ցոյց կը տար անկեղծ զղջումն, այն ինչ հեղ զղջացող յանցաւորն, որ ենթարկուել է քրէական օրինաց հալածանքին, պէտք է կրէ նոյն պատիժն, ինչպէս և յամառ յանցաւորը: Եթէ և մի քանի դէպքերում պատիժը կարող է և՛ նպաստել ուղղուելուն, բայց և այնպէս դրանով նորա մերձաւոր և էական նպատակը չէ որոշուում: Եթէ պատժի միակ նպատակն երկիւղ տալը լինէր, այդպիսի դէպքում յանցաւորը կը լինէր միայն միջոց ուրիշներին ուղղելու համար և ոչ նպատակ և աւելի մեծ երկիւղ տալու համար հարկ կը լինէր հնարելու աւելի և աւելի խիստ պատիժների, որին ոչ ոք հաւանութիւն տալ չէ կարող: Վերջապէս, եթէ պատիժը լինէր լոկ անհրաժեշտ ինքնապաշտպանութիւն պետութեան կողմից, այն ժամանակ պետութիւնն իւր ապահովութեան համար աւելի լաւ սրած կը լինէր, եթէ ամեն յանցաւորին կեանքից զրկէր և կամ գտնէ ցմահ բանտարկուած պահէր, որովհետեւ այն ժամանակ սրտեալ չափով պատիժ սրտելը կը կորցնէր իւր նշանակութիւնն ու կշիռը:

Առաջին և էական հայեցակէտն, որ անհրաժեշտ է այս խնդիրը

վճռելու համար և որ մեր առաջ դնում է պատժի գաղափարի հիմնակէտն, է այն հայեացքը թէ պատիժը տրուում է արդարութեան համար (Շտալ, Հեգել, Ռօտէ և այլք): Պատիժը արդարութեան հակադրեցութիւնը, հակագործութիւնն է իրաւանց կարգի մէջ կատարուած խանգարման կամ խախտման դէմ: Կարգի, որ այսպէս խանգարչի վերաբերութեամբ հանդէս է գալիս իբրեւ զօրութիւն: Վիրաւորուում է, անարգուում է իրաւանց կարգի մեծութիւնն ու սրբութիւնն և նա սորա համար բաւարարութիւն է ստանում նրանով, որ յանցաւորը ստանում է իւր արժանաւոր ~~արժանաւոր~~: Զղջացող աւազակը ճշդութեամբ հասկանում է պատժի նշանակութիւնն, երբ ասում է. «մեք յիրաւի զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն» (Ղուկ. ԻԳ. 41): Երբ յանցաւորը տանում է արդար պատիժը, տանջանքներն կը զարթուցանեն նորա հոգւոյ մէջ մեղքի յանցանքի գիտակցութիւնն և զղջումն, ուրեմն ուղղում են նրան, իսկ այլոց վերայ կը գործեն պակուցանող, սարսափեցնող տպաւորութիւն: Բացի սրանից կարելի է ասել, որ պետութիւնը պատժի միջոցով պաշտպանուում է յանցաւոր կամայականութեան դէմ: Իսկ եթէ պատիժն ինքն ըստ ինքեան զննելու և հետազօտելու լինինք, նորա իսկական և էական հիմն կազմող գաղափարն այն է, որ արդարութիւնը բաւարարութիւն է ստանում, «զի դարձցին իրաւունք յարդարութիւն (Սաղմ. ՂԳ. 15): Տրիտուրը չը պէտք է հասկանալ այնպէս, թէ պատիժը պէտք է արտաքին և տառական կերպով համապատասխանէ յանցանքին (ալին ընդ ական և ատամն ընդ ատամն և այլն), որ անմոութիւն կը լինէր: Այս դէպքում յարաբերութիւնը չը պէտք է արտաքին հաւասարութեան, այլ ներքին հաւասարութեան յարաբերութիւն լինի, այսինքն պատիժը պէտք է լինի համեմատաբար, պէտք է յանցանքի էական յատկութեան հետ համապատասխան յարաբերութիւն ունենայ: Այսպէս երբ բաւարարութիւն պահանջուում է հասցրած վնասի համար, մինչդեռ վնասը չէ կարող վարձատրուիլ այս խօսքի բուն և անմիջական նշանակութեամբ, (այսինքն կորցրած իրը չէ կարող վերագարձնուիլ) սովորաբար գնահատուում են վնասն և այսպէս վարձատրում:

Արդար հատուցումն փրկեց խնդրութիւն չէ, որ ծնունդ է կրքոտութեան և ետականութեան: Ընդհակառակն նա յանցաւորի մէջ յարգում է մարդկային արժանաւորութիւնն և տեղի չէ տալիս անմարդասէր և բարբարոս զգացմանց: Այսպէս զորօրինակ անմարդասիրական (տմարդի) համարելի է մահուան պատժի հետ զանազան տանջանքներ ու կտտանք միացնելը կամ այնպիսի պատիժներ դնելն, միացած աղատութիւնից զրկելուն հետ, որոնք յանցաւորին ի շարս անձնաւորութիւն չունեցող առարկայից են դասում, ինչպիսի էր թիարկութեան պատիժը ցռկանաւերի վերայ և կամ խայտառակ պատիժներն, որոնք ջնջում են յանցաւորի մէջ յարգանաց զգացմունքը դէպի ինքն և աւելի ևս անբարոյականացնում են նրան, զորօրինակ խարանելը, բարբարոսաբար վարուում են բանտարկեալների հետ, երբ նրանց զրկում են ամենեւին յարաբերութիւնից մարդկային հասարակութեան հետ: Թէև բանտերն իսկապէս ըստ իւրեանց նշանակութեան չը պիտի լինին ուղղիչ հաստատութիւններ, բայց և այնպէս նոքա իրանց անմիջական և իսկական նշանակութեան հետ միասին իրանց վերայ պիտի առնուն գիտակցաբար և պարտականութիւնն ուղղելու յանցաւորներին և մանաւանդ պէտք է թոյլ տան, որ քրիստոնէական վարդապետութիւնը մօտենայ նրանց, որպէս զի կատարուի Փրկչի յայտնի խօսքը թէ «ի բանախ էի և եկիք առիս» (Մատ. ԻԵ. 36): Հէնց մեր ժամանակը ցոյց է տալիս, թէ որքան գործ կարելի է կատարել այդ աստարիզում յանցաւորների ճշմարիտ բարեաց համար: Հակառակ հին ժամանակի բարբարոսական պատիժներին ներկայ ժամանակի պատժական օրէնսդրութիւնը նշանաւոր է իւր մարդասիրութեամբ, այս մասին վկայ են շատ վերաբերմամբ բանտերի կազմակերպութեան բարելաւումն, որ յայտնի մարդասիրական և քրիստոնէական ձգտումների հետեանք է: Մեր ժամանակի տիուր և մնայլ կողմն այն է, որ մարդասիրութիւնը զարգանում է ի վնաս արդարութեան, որ իրաւանց պահպանութեան ժամանակ յայտ է գալիս չափազանց աւելորդ ներդամութիւն և մեղմութիւն, որ կարող է հասարակութեան բարոյականութեան և առհասարակ նորա վիճակի վերայ վնասակար ազդեցութիւն գործել: Զորօրինակ երբ ներկայումս հակումն կայ

յամառ և անուղղայ յանցաւորներին պատասխանատուութիւնից ազատ համարելու. կամ երբ (եթէ օրինակ առնենք ուրիշ շրջանի) ատրիճանաւորին ինքնիշխան գործողութեան համար պատժում են աննշան գրամական տուգանքով, երբ, ինչպէս ասում է Մինսոէր եպիսկոպոսը իւր ինքնակենսագրութեան մէջ, իրաւաբանական արհեստը գործ է գնում իւր բոլոր սրամտութիւնը միայն նորա համար, որ գտնէ մեղմացուցիչ միջոցներ ու ներողամտութեան ելք վատ մարդոց համար—այս ամենը ծայրահեղութիւն է, հակառակը հին ժամանակի խստասրտութեան: Թէև յայտնի բան է անհնարին է առանց դրամական տուգանքների վարուիլ. բայց նորա առհասարակ երկբայական պատժական միջոց են: Նոքա միայն չքաւոր մարդոց համար զգալի են, այն ինչ աւելի կարող և հարուստ անձի համար կամ նորա համար, ով ունի իւր փոխարէն վճարող բարեկամներ, տուգանքները այլ նշանակութիւն չունին, բայց եթէ այն միայն, որ նա յանցաւոր է հրատարակուում: Բայց այս հանգամանքը շատերի վերայ շատ թոյլ տպաւորութիւն է գործում, երբ սորա հետ միասին ինքը պետութիւնը նորա յանցաւորութեան այնպիսի չնչին նշանակութիւն է տալիս:

Ամենից բարձր ու ծանր պատիժը ճահաւն պատիժն է: Հին ժամանակ մահուան պատիժը շատ յաճախ էր գործադրուում և այն զանազան յանցանքների համար: Ներկայ ժամանակիս միակողմանի մարդասիրական ձգտումն և ուղղութիւնը նրանումն է, որ նա աշխատում է բոլորովին վերացնել, ջնջել մահուան պատիժը: Բայց կայ յանցանք, որ կարծես ինքն ըստ ինքեան պահանջում է մահուան պատիժ, իբրև միակ համապատասխան պատիժ: Գեռ ծննդոց գրքում ասած է. «Որ հեղու զարիւն մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արիւն նորա, զի ի պատկեր Աստուծոյ արարի եւ զմարդն (Մենդ. Թ. 6): Աստուծոյ այս խօսքն ասած է շատ և շատ առաջ, քան խորայնացոյց ազգը գոյութիւն ունէր աշխարհիս երեսին և ուղղած է բոլոր մարդկային սեռին: Բոլոր Հին կտակարանի մէջ այն հայեացքն է երևում, ինչ որ յայտնում են վերոյիշեալ խօսքերը, նոյնպէս և Նոր կտակարանում թոյլատրուում է մահուան պատիժը զորօրինակ հետեւեալ ասացուածներով. «իշխա-

նութիւնն ոչ եթէ վայրապար ածեալ է սուսեր ընդ մէջ. Աստուծոյ սպասաւոր է յիշեթխնդիր ի բարկութիւն այնմ որ զչարն գործիցէ, (Հռովմ. ԺԳ. 4): «Ամենեքեան որ սուր առնուցուն, սրով անկանիցին» (Մատթ. ԻԶ. 52), «են ոմանք, որ սրով մեռցեն» (Յայտն. ԺԳ. 10): Բայց և անկախ սրանից մահուան պատժի օրինաւորութիւնը ծագում է առարկայի նոյն իսկ էութիւնից: Այն է, որ եթէ պատիժն արդար հաստուցումն է և եթէ յանցանքն ու պատիժը միմեանց պիտի համապատասխանեն, զիտմամբ կատարուած մարգասպանութիւնը պէտք է պատժուի մահուամբ: Կեանքի փոխարէն, որ իւր մէջ բովանդակում է մարդուս բոլոր գոյութիւնն և ոչ թէ նորա այս կամ այն կողմը կամ այս կամ այն կենսական բարիքը, կարող է հաստուցումն լինել միայն և եթէ կեանքը: Այստեղ «կեանքը փոխարէն կեանքի» կանոնը կշիռ ունի: Մասը չէ կարող աճողը հաւասարակշիռ լինել, այս ճշմարտութիւնը հաստատում են նոյն իսկ իրանք մահուան դատապարտուածներն, եթէ նոքա հասնում են ճշմարիտ բարոյական ինքնաճանաչութեան: Որովհետեւ այսպիսի դէպքում նորա չեն գանգատում անարդարութեան դէմ, այլ սովորաբար ցանկանում են տանել մահուան, զգալով, որ միայն գրանով կարող են քաւել իրանց յանցանքը:

Մահուան պատժին ընդդիմադրութիւնն անցեալ դարում սկսաւ իտալացի Զեղարէ դէ Բեկկարիան (1738—1794): Նա մահուան պատիժն ապօրինի է համարում այն հիման վերայ, որ նա չէ բովանդակում — չկայ նախնական քաղաքական դաշնադրութեան մէջ: Այն է, անհասկանելի է և անընդունելի, որ ով և իցէ՝ հաւանութիւն տայ, որ իրան սպանեն, եթէ ինքը սպանել է մի ուրիշին, որովհետեւ ոչոք իւր կեանքի տէրը չէ, ոչոք չէ կարող իւր կեանքի հետ վարուել ինչպէս կամենում է: Անպտուղ աշխատանք կլինէր մանրամասնաբար քննել այն սոփեստութեանց հիստուածքն, որ բովանդակում է իւր մէջ այս կշռադատութիւնը: Մենք կբաւականանք միայն նկատելով, որ պետութիւնը բնաւ չէ հիմնուում քաղաքական դաշնադրութեան վերայ, որ նա չէ պարզ մարդկային հաստատութիւն, այլ իւր ներքին էութեամբ Աստուածային հաստատութիւն է, ուր իշխանութիւնն Աստուծոյ

սպասաւորն է և արդարութեան, և ուր արդարութեան օրէնքն պահպանուած է իւր նշանակութիւնն ու կշիւը անկախ նրանից, թէ արդեօք մարդիկ հաւանութիւն տալիս են նրան, թէ ոչ: Շէշէր-մախէրը նոյնպէս մերժուած է մահուան պատիժն, իրրեւ բարբարոսութիւն և պահանջուած է, որ թագաւորները ջանան ջնջելու այն և սորա համար ամենեւին չստորագրեն մահուան դատաւճիռներն, ուրեմն յամենայն դէպս ողորմեն: Շէշէրմախէրի այս հաշեացքը հիմնուած է հետեւեալ տեսակէտի վերայ. ոչոք իրաւունք չունի ուրիշին նոյն պատիժը տալու, որ իրաւունք չունի ինքն իրան տալու: Բայց ոչոք իրաւունք չունի ինքն իրան սպանելու, ուստի և մահուան պատիժն էլ թոյլատրելի չպիտի լինի: Մենք չենք կարող հաւանութիւն տալ այս պատճառաբանութեան, որ նման է Բեկկարիայի պատճառաբանութեանը: Մենք համաձայնուած ենք, որ յանցաւորը պէտք է կարողանայ խոստովանել, որ իւր համար նշանակած պատիժն արդարէ. այլ թէ նա ինքը պիտի նշանակէ իրան համար պատիժ—այդ մեր կարծիքով հակառակ է առարկայի էութեան և նորա գաղափարին, որովհետեւ պատիժը պէտք է նշանակած լինի բարձրագոյն հեղինակութիւնից: Առհասարակ այդ առարկայն պէտք է քննուի ոչ թէ ինքնօրինական անսակէտից, ոչ ըստ մարդկային օրէնստուութեան, այլ Աստուծոյ օրէնսդրութեամբ: Պատժական տեսութիւնն, որ մերժուած է մահուան պատիժը, առաւելապէս ծագում է հետեւեալ տեսակէտից. ամեն պատժի նպատակն է յանցաւորին ուղղելն, ուստի և մահուան պատժի հակառակորդները նորա փոխարէն առաջարկում են ցմահ բանտարկութիւնը: Բայց որովհետեւ մենք ընդ հակառակը հաստատում ենք, որ պատիժը նշանակուած է արդարութեան համար, ուստի և մենք պէտք է պնդենք այն համոզման վերայ, թէ ցմահ բանտարկութիւնն կամ ազատութիւնից զրկելը չէ ինչ հաւասար կամ համապատասխանող կեանքից զրկելուն և չկայ առհասարակ կեանքը փոխարինող ոչ մի առարկայ: Մենք չենք կարծում նոյնպէս, որ երբ և իցէ կ'յաջողի մահուան պատիժը ջնջելու—գուցէ միայն կարճ ժամանակով. այս կ'յաջողէր, եթէ միայն յաջողէր աշխարհիս երեսին սպանութեան

վերջ դնելը: Գէօտէն ասում է. «Եթէ կարելի լինէր ջնջել մարդասպանութիւնն մենք ոչինչ չէինք ունենալ ասելու դորա դէմ: մահուան պատիժը ջնջելը դժուար կլինի: Եթէ այս տեղի էլ ունենայ, կպատահի այն այնպիսի դէպք, որ մենք նրան կլերանորոգենք:—Եթէ հասարակութիւնը կհրաժարուի մահուան պատիժ նշանակելու իրաւունքից, անշուշտ անմիջապէս հանդէս կը գայ ինքնօգնութիւնը, արեան վրէժխնդրութիւնը: Յոխէփ երկրորդ կայսրը Աւստրիայում ջնջեց մահուան պատիժն և դորա փոխարէն յանցաւորները դատապարտուում էին, որ նոքա նաւերը քարշեն Գանուբի ընթացքի դէմ: Բայց շուտով անհրաժեշտ եղաւ կրկին վերահաստատիլ մահուան պատիժը: Ֆրանսիական յեղափոխութեան սկզբում յանուն մարդասիրութեան ջնջուեցաւ մահուան պատիժը, բայց մենք գիտենք, թէ որքան շուտ և որ չափով նա վերահաստատուեցաւ: Կեղծ գործադիր մարդասիրութիւնը դարձաւ սարսափելի բարբարոսութիւն, ուր գործադրուում էր գիլետտինի մօջուցով:

Իսկ եթէ մենք անհրաժեշտ ենք համարում մահուան պատիժը, բայց և այնպէս մենք պարզապէս սահմանափակում ենք այն նախապէս լճուած և Նպաստահաւոր մարդասպանութեամբ: Մենք չենք համարձակում նրան տարածել և՛ քաղաքական յանցանքների վերայ, բացի այն դէպքերից, երբ այդ յանցանքների հետ միացած է մարդասպանութիւն, որովհետեւ սորա համար բաւականաչափ հիմն չկայ: Բայց մահուան պատիժ վերաբերմամբ գլխաւոր հիմն արդար հասուցման շարժակէտն համարելով, իբրեւ էական և լճուական շարժառիթը—մենք այնուամենայնիւ տալիս ենք պատիժ այլ հիմունքներին էլ պատշաճաւոր նշանակութիւնը: Յայտնի բան է, յանցաւորն ուղղուելու համար պէտք է վայելէ կրօնի և եկեղեցւոյ օգնութիւնը, նորա խրատներն ու մխիթարութիւնքը: Եւ եթէ մահուան պատիժը կատարուում է հրապարակաւ, ինչպէս և նա պէտք է կատարուի—նա սարսափեցուցիչ կերպով ազդում է ժողովրդի վերայ, որոյ համար նա չպէտք է լոկ դարտակ տեսարան լինի, այլ յարուցանէ նորա մէջ վիշտ և զղջումը, որովհետեւ ամբողջ հասարակութիւնն իւր մեղսալից և յան-

ցաւոր յիշակով աւելի կամ պակաս յանցաւոր է այս բանի մէջ, որ յանցաւորը դարձել է այնպիսի անձն, որպիսին նա է:

Ինչ վերաբերում է ողորմութեան իրաւունքին, որ ամեն երկիրներում պատկանում է բարձրագոյն իշխանութեան, իբրեւ սորա առանձնաշնորհութիւններից մէկը — գորա վերայ չը պէտքէ նայել, իբրեւ անարգարութեան կամ յանցաւորին արգար պատժից կամացականութեամբ ազատելու վերայ, թէ և յաճախ այդպէս էլ եղել է: Ընդհակառակն այդ է իրաւունք յանցաւորին ազատելու մահուան պատժից առանձին մասնաւոր դէպքերում: աչքի առաջ ունենալով մեղմացուցիչ պարագաներն, զորօրինակ ի շնորհս նորա գեռափթիթ հասակին կամ գայթակղութեան առանձին բնաւորութեան, որ օրէնսդրութիւնն և դատարանը հաշուի առած ունանալ չէին կարող:

Նախընթաց գատողութեանց կարելի է աւելացնել այս հարցը, եթէ նա յիշելի կերպով պետութեան է պատկանում սպանութիւնքը պատժելու իրաւունքն, ի՞նչ դիրք նա պէտք է բռնէ անձնասպանների վերաբերութեամբ: — Մենք կեղծ մարդասիրութեան նշան պէտք է համարենք այն հանգամանքն, որ շատ պետութիւններում թոյլատրուում է անձնասպաններին բոլոր եկեղեցական ծխակառարութեամբ թաղել: Ինքնասպանը մեղանշում է ոչ միայն Աստուծոյ և իւր գէմի այլ և ամբողջ Հասարակութեան դէմ — որովհետեւ նա ամենամեծ գայթակղութեան օրինակ է գաւնում նրանով, որ յանգգնաբար խախտում է կրօնի պատուիրանը: Արա դէմ՝ անշուշտ անհրաժեշտ է բնդգիմադրութիւն հասարակութեան կողմից, եթէ նա ինքն էլ օտարացած չէ կրօնից: Հասարակութիւնն, որ թոյլ է տալիս յատուկ քրիստոնէական թաղումն կոտորել անձնասպանների համար, ինքն իրան քրիստոնէական օրինաց շրջանից դուրս է հանում: որովհետեւ այդ հանգամանքը ցոյց է տալիս նորա անտարբերութիւնն ու առնութիւնը դէպի կրօնը: Մենք չենք յիշում, որ մի քանի այդպիսի դէպքերում կարող են պատահել մեղմացուցիչ պարագաներ, այնպէս որ այդպիսի հանգամանքներում կատարեալ իրաւամբ կարելի է գործադրել անդատապարտութեան կամ ներողամտութեան կանոնն, որ երբեմն էլ ի չարն է գործ գնուում: